ՏԵՂԵԿԱՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 169[20]. ~~Անշարժ գույքի գ~~Գնահատման գործունեություն իրականացնող անձանց կողմից գնահատողի հետ աշխատանքային պայմանագիր կնքելուց կամ աշխատանքային պայմանագիրը լուծելուց հետո դրանց պատճենները լիազոր մարմին չներկայացնելը

~~Անշարժ գույքի գ~~Գնահատման գործունեություն իրականացնող անձանց կողմից գնահատողի հետ աշխատանքային պայմանագիր կնքելուց կամ աշխատանքային պայմանագիրը լուծելուց հետո դրանց պատճենները լիազոր մարմին չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

(169[20] - րդ հոդվածը լրաց. 08.12.11 ՀՕ-337-Ն)

Հոդված 169[21]. ~~Անշարժ գույքի գ~~Գնահատման հաշվետվությունը չորակավորված անձի կողմից ստորագրելը

1. ~~Անշարժ գույքի գ~~ Գնահատման հաշվետվությունը ստորագրելը օրենսդրությամբ սահմանված կարգով ~~անշարժ գույքի~~ գնահատողի որակավորում չստացած անձի կողմից՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Նույն արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

(169[21] - րդ հոդվածը լրաց. 08.12.11 ՀՕ-337-Ն)

Հոդված 169[22]. Չորակավորված անձի կողմից ստորագրված ~~անշարժ գույքի~~ գնահատման հաշվետվությունը հաստատելը

1. Չորակավորված անձի կողմից ստորագրված ~~անշարժ գույքի~~ գնահատման հաշվետվությունը հաստատելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2. Նույն արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

(169[22] - րդ հոդվածը լրաց. 08.12.11 ՀՕ-337-Ն)